ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԸ ՀԱՄԱԼՐՎԵԼ Է ՆՈՐ ԱՆԴԱՄՆԵՐՈՎ

07.07.2025 15:29

2025 թվականի հուլիսի 5-ին տեղի է ունեցել ՀՀ փաստաբանական ակադեմիայի շրջանավարտների արտոնագրման արարողությունը:

Միջոցառումը մեկնարկել է Հայաստանի Հանրապետության օրհներգի ներքո:

Հատկանշական է այն, որ հուլիսի 5-ին Հայաստանում նշվում է ՀՀ Սահմանադրության և պետական խորհրդանիշների օրը, և դա ևս մեկ առիթ էր վկայակոչելու Սահմանադրության 64-րդ հոդվածը, որով երաշխավորվում է անկախության, ինքնակառավարման և փաստաբանների իրավահավասարության վրա հիմնված փաստաբանության գործունեությունը:

Ողջույնի խոսքով հանդես են եկել ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Սիմոն Բաբայանը, ՀՀ փաստաբանական ակադեմիայի ռեկտոր Արա Ջոհրաբյանը, Փաստաբանների պալատի խորհրդի անդամ Մարինե Ֆարմանյանը:

Այնուհետև ելույթ են ունեցել նաև հավակնորդներ Մարիամ Թումոյանը և Անահիտ Առաքելյանը:

Ելույթներին հաջորդել են ապագա փաստաբանների հանդիսավոր երդման և փաստաբանական արտոնագրերի շնորհման արարողությունները:

Փաստաբանական համայնքը համալրվել է 95 փաստաբանով:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })